



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 15 ՅՈՒՆԻՍ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚ս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 133

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈՅ

Ի՛նչ գեղեցիկ է, եւ ի՛նչ հաճելի՝
երբ եղբայրներ միասին կ'ըլլան:
Նման է այն թանկագին իւղին,
որ օծման ատեն Ահարոնի գլխուն կը թափուի,
եւ կը հոսի վար՝ մինչեւ մօրուքը,
եւ մօրուքէն վար՝ կը հոսի մինչեւ պատմուճանին օձիքը:
Նման է Զերմոն լեռան վրայ իջնող առատ ցօղին,
որ կը ցօղէ Սիոնի լեռները:
Յոն՝ Սիոնի մէջ է որ Տէրը կը պարգեւէ
իր օրհնութիւնը՝ որ յաւիտենական կեանք է:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈՐՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուր Երրորդութիւն, տուր աշխաւհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՂՈՐՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոսիանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ



ԵԼԻՑ ԻԹ (29) ԳԼՈՒԽ



ԱՀԱՐՈՆԻՆ ԵՒ ՈՐԴԻՆԵՐՈՒՆ ԶԵՌՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ (29:1-37)

«**Զանոնք օձէ, օրինէ եւ սրբէ, որպէսզի ինծի քահանայութիւն ընեն**» (28:41): Այսպէս րեղի պիտի ունենար Ահարոնին ու անոր որդիներուն քահանայութեան պաշտօնին կոչուիլը: Իսկ այս գրուիլը, որ նաեւ շարունակութիւնն է նախորդին, մեզի կը ներկայացնէ, սրբելու եղանակը ինչպէս րեղի պիտի ունենայ. «**Արջարներէն զուարակ, երկու անարապ խոյ, անխմոր հաց, իւղով շաղուած անխմոր շօթեր եւ իւղով օծուած անխմոր լաւաշներ, ցորենի բարակ ալիւրով շինուած**» (2 հմբ): Առաւել, թեկնածուները պէտք է Վկայութեան Խորանին դիմաց բերուին, ջուրով լուացուին ապա զգեստաւորուին: Քահանայապետը յաջորդաբար պիտի հազնի շապիկը, պարմուճանը, եփուփը, լանջապանակը եւ խոյրը, իսկ քահանաները աւելի պարզ՝ շապիկ, գօտի եւ ապառօշ: Ապա պիտի բերեն զուարակը իրենց ձեռքը անոր վրայ դնեն, որ զիրենք կը փոխարինէ, իբրեւ զոհ իրենց մեղքերուն համար: Զուարակին փորոքիքը ծածկող ճարպը, լեարդին վրայ եղած թաղանթը եւ երկու երիկամունքները պիտի այրուին սեղանին վրայ, բայց միսը եւ մորթը բանակավայրէն դուրս պիտի այրուի: Ասիկա մեղքի պատարագն է: Այս գոհը ոչ Աստուծոյ կ'ընծայուի, եւ ոչ ալ մարդիկ կրնան բաժին ունենալ:

Ապա երկու խոյերը: Առաջին խոյը իբրեւ ողջակէզ, որ կը նշանակէ ամբողջութեամբ ընծայել Աստուծոյ, իբրեւ անուշահոտ պատարագ: Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «*Կ'աղաչեմ որ դուք ձեզ Աստուծոյ ընծայէք որպէս կենդանի զոհ՝ իրեն վերապահուած, որովհետեւ արիկա է Աստուծոյ ուզած հոգեւոր պաշտամունքը*» (Հռոմ 12:1): Մէկ այլ ուրիշ րեղ. «*Քրիստոս մեզ սիրեց եւ մեզ փրկելու համար ինքզինքը Աստուծոյ ընծայեց որպէս անուշահոտ ընծայ եւ զոհ*» (Եփես 5:2): Երկրորդ խոյը՝ օրհնութեան պատարագ է, որուն լրումը Քրիստոս Ինք կատարեց: Այս բաժինը մենք այսօր ունինք պատարագի ընթացքին, երբ դպիրները կ'երգեն ըսելով. «Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան», որ կը նշանակէ անիկա Աստուծոյ ողորմութեան եւ սիրոյ արտայայտութիւնն է եւ խաղաղութիւնն է՝ հաշտութիւնը Աստուծոյ եւ մարդուն միջեւ, եւ երախտագիտութեան նուէրը, զոհը, պատարագ օրհնութեան:

Զեռնադրուելէ յետոյ 7 օր կ'առանձնանայ, եւ ամէն օր մէկ խոյ կը զոհէ Աստուծոյ իբրեւ օրհնութեան պատարագ, որպէսզի անոնց օրհնութիւնը ամբողջանայ, եւ այդ օրհնութեան խոյը ծառայէ անոնց պաշտօնի ամրապնդման համար: Խոյին ճարպային բաժինները Աստուծոյ պիտի ընծայուին իսկ պատրաստուած հացերէն մէկական հար պիտի առնեն քահանաները եւ զայն Տիրոջ առջեւ պիտի երերցնեն եւ ապա կրակին վրայ իբրեւ անուշաբոյր ընծայ պիտի այրեն, մնացեալ հացերը պիտի ուտեն: Խոյին երփուծը (կուրծքի միս) իբրեւ երերցնելու ընծայ պիտի առնէ, իսկ աջ զիսպը իբրեւ բարձրացնելու ընծայ: Բարձրացնելու ընծան, ուղղակիօրէն Աստուծոյ ընծայել, իսկ երերցնելու ընծան՝ Աստուծոյ ընծայել, բայց նաեւ իրենց գործածութեան սահմանուած ընծայ: Երբուծը քահանաները իրենք պէտք էր ուտէին սրբավայրին մէջ, իսկ զիսպը իրաւունքն էր այն քահանային որ զոհ կը մատուցանէր, եւ կրնար իր բաժինը փուն փանիլ: Այս պարագային զոհը մատուցողը Մովսէս ինքն էր, անոր համար ալ կ'այրէ, չ'ուտեր, որովհետեւ քահանայական իրաւունք չ'ունէր:

Այն զգեստները որոնք օծուեցան, ժառանգութիւն պիտի դառնայ քահանայական յաջորդ սերունդներուն: Զոհերուն խորհրդանշական իմաստը այն է, որ քահանաները մեղանշական մարդիկ էին եւ պէտք ունէին սրբուելու, եւ անոնց քաւութեան իբրեւ կերպ Աստուած անոնց փուտ կենդանի մը, զոհ մը՝ զիրենք փոխարինող: Երկրորդ ողջակէզով, կը խորհրդանշէ ամբողջական ընծայում Աստուծոյ, զիրենք անջարելով աշխարհէն եւ իր ծառայութեան յարկացնելու: Իսկ երրորդը՝ օրհնութեան պատարագ, որ Աստուած անոնց պիտի փայ մնայուն շնորհքը Իր հետ հաղորդակցութեան մէջ ըլլալու եւ իրենց քահանայական պաշտօնին մէջ ամրացնելու: Այս երրորդ զոհի արիւնով նաեւ պիտի օծուին, անոնց ականջը, ձեռքի ու ոտքի բթամաքները, ըսելու համար որ այդ օծումը իրենց մարմիններուն վրայ պիտի յիշեցնէ Աստուծոյ դրած նոր դրոշմը, ոչ միայն անոնց պարկանելիութիւնը ցոյց տալու համար, այլ նաեւ շնորհները անոնց վրայ մնայուն դրոշմով պահելու իմաստով:

Հետաքրքրական երեւոյթ է քահանաներու ձեռնադրութեան արարողութեան յաջորդականութիւնը:

1. Ահարոն օծում կը ստանայ - Քրիստոս-Օձեալ
2. Զոհեր կը մատուցանէ - Քրիստոսի զոհագործումը
3. Միւս քահանաները կը ձեռնադրուին - Առաքեալներ:

Այս բոլորը կու գան ցոյց փալու որպէս նախապիպը գալիք այն ճշմարտութեան որ պիտի իրականանար Քրիստոսով: Այսպէս, Ահարոն կը ներկայանայ Քրիստոսի նախապիպարը, որուն զգեստները խորհրդանշելով Քրիստոսի քահանայապետական պաշտօնը եփուրը՝ վակասներով իր ուսերուն վրայ առած: Լանջապանակը Քրիստոսի մարգարեական պաշտօնը «Ուրիմով ու Թումիմով», իսկ խոյրը՝ Քրիստոսի թագաւորական պաշտօնը:

Իսկ գալով առանձնացումին, որպէսզի անոնք որոնք Աստուծոյ օրհնութիւնն ու օծումը կը ստանան, այդ առանձնացումը առիթ պէտք է փայ որպէսզի այդ խորհուրդին մէջ ամրանան, գիտակցութիւնը արթնցնելու, քահանայագործութեան մասին մտածելու: Իսկ այսօրուան իմաստով 40 օրերու առանձնացումը օրինակ առնելով Քրիստոսի 40 օրուան ծոմապահութիւնը:

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԸՆԾԱՆԵՐ (29:38-46)

Իսկ գալով ամենօրեայ ընծաներուն կապակցաբար, առփու եւ իրիկուն մէկ փարեկան գառնուկ, ծեծուած ձէթով շաղուած բարակ ալիւր եւ գինի, որպէս անուշահոտ պատարագ Տիրոջ (40-41 հմր): «Այս ընծաները որպէս մշտնջենաւոր ողջակէզ պիտի ըլլայ Տիրոջ առջեւ Վկայութեան Խորանին դրանքով, ուր Տէրը Իր ժողովուրդին պիտի հանդիպի անոնց հետ խօսելու համար, անոնց հանդիպելու: Անոնց մէջ պիտի բնակիմ ու անոնց Աստուած պիտի ըլլամ: Անոնք պիտի գիտնան թէ՛ իրենց Տէր Աստուածը եւ եմ, որ իրենց մէջ բնակելու համար Եգիպտոսի երկրէն հանեցի զանոնք: Ես եմ իրենց Տէր Աստուածը» (42-46 հմր):